Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/13>> ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի նոր մանկապարտեզի (80 տեղով) կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04 օգոստոսի 2017թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Ա. Գրիգորյան /գնահատող/
Ֆ. Սարգսյան / բացող /
Գ. Գևորգյան / բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի և գնման ընթացակարգի N2 արձանագրության մեջ փոփոխություն կատարելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից պահանջվող եզրակացությունը ստացվել է սահմանված ժամկետից շուտ՝ գնահատող հանձնաժողովը որոշում է սույն ընթացակարգի N2 արձանագրության 4.1 կետում <<օգոստոսի 7>> արտահայտության փոխարեն կարդալ <<օգոստոսի 4>>:

- Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ _____ Ռ. Եղիազարյան

_____ Ա. Գրիգորյան

_____ Գ. Գևորգյան

_____ Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Տ. Վասիլյան